Արմաւիր) Գէորգայ Կարապետեան Դուլթեանց ընդ օրիորդ Զարգարայ Յովհաննիսեանց. թ. 627։

Հայրապետական պարգեւ.

Կոնդակ յանուն Կարապետ քահ.-ի Ղազարեան Բուղդաշէն գեղջ, որով շնորհին նմա իրաւունք կրելոյ գլանջախաչ քահանայական. թ. 607։

Հայրապետական օրհնութիւնք եւ շնորհակալիք.

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան յանուն Գէորգ աղայի Խասամաղայեան Մելիտոպոլցւոյ, յաղագս նուիրաբերելոյ նորա 300 ր. վանուցն ս. Խաչի որ ի Հին Ղրիմ. թ. 577։

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն Տիկին Նունեայ Յովհաննիսեանց, վասն խոստման նորա կառուցանել ի գաւթի ս. Փրկիչ եկեղեցւոյ Բաթում քաղաքի սենեակս ի սեփականութիւն եկեղեցւոյն. թ. 591։

ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՈԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

Մարտ 3. Սինոդը տեղեկանալով Կովկասի Հայոց լրագիրներից, իբրև թէ Տ. Խաչիկ վարդապետի յանձնարարութեամբ զանազան գաւառական քաղաքներում և գիւղերում հանգանակութիւններ են լինում «Զուարթնոց» եկեղեցու համար, առանց օրինական կարգով պատշաճաւոր թոյլտուու-

թիւն ստանալու՝ համաձայն 1216 յօդ. I մ. XI հատ. ժողովրդ. հրատ. 1890 թ.։—հեռագրներով պատուիրեց Ռուսաստանի Հայոց թեմական ատեաններին, դադարեցնել ժողովարարութիւնը, գրաւել ժողովուած գրամները, մատեանները, ցուցակները և անդորրագրերը և բոլորը ուղարկել Սինոդ, յայտնելով նաև, թէ ո՞ւմ կարգադրութեամբ և թոյլատուութեամբ և որո՞նց ձեռքով և ինչպիսի՞ եղանակով է կատարուում հանգանակութիւնը։

Մարտի 3.—Սինոդը հրամայեց՝ յարգել Երևանի թեմ. ատեանի միջնորդութիւնը և թոյլ տալ ընդունելու Բաշ—Քեադիկլար գիւղի բնակիչ Համազասպ Ղարագեօզեանցին հոգևոր կոչման մէջ՝ ձեռնադրելու քահ. նոյն գիւղի համար։ Ընծայացուն քննուած է թեմական ատեանում, ապահոված և ընտրուած է գիւղից, որ բաղկացած է 74 տնից և չունի քահանայ։

Մարտի 3.—Յարգել Եր. թեմ. ատեանի միջնորդութիւնը և թոյլ տալ ընդունելու Զանգեզուր գաւառի Փոքր Հանդ գիւղի բնակիչ Յովհաննէս Տ. Յարութիւնեանցին հոգևոր կոչման մէջ՝ ձեռնադրելու քահ. նոյն գիւղի համար։ Ընծայացուն քննուած է թեմական ատեանում և բաւարար համարուած, ապահոված և ընտրուած է գիւղից, որ բաղկացած է 34 տնից և չունի քահանայ։

Մարտ 4.—Մերժել Օշական գիւղի բնակիչ Փիլիպպոս Յարութիւնեանի խնդիրը, որով խնդրում է ստանալ իր այգիներից մինը՝ տեղւոյն ս. Մեսրոպը եկեղեցուն տալիք մի հազար բուբլի պարտքի փոխարէն, որի արժէքը, Երևանի թեմ. ատեանի տուած տեղեկութեամբ՝ 500 բուբլի է, և պատուիրել յիշեալ ատեանին՝ պահանջել դատաստանական կարգով 1000 բուբլին։

— Մարտի 4. Մերժել Երևանի թեմ. ատեանի երկրորդ միջնորդութիւնը Երևանի գաւառի Գիւմրիշ գիւղի բնակիչ Արշակ Տ. Մինասեանի ձեռնադրութեան համար, սորա տգիտութեան պատճառով։

— Մարտի 5. Յարգել Ախալքալաքի գաւառի Կասպ և Նատարբաղևի գիւղերի բնակիչների ցանկութիւնը և պա-

տուիրել Տփխիսի թեմ. ատեանին՝ մերժել տփխիսաբնակ Գէորգ Առաքելեանցի ձեռնադրութեան գործը և առաջարկել Տփխիսի նահանգապետին Գօրու գաւառի Ախալքալաք գիւղի բնակիչ Էլիզբար Օհանեանցի հարկից ազատման թերթը՝ ըստ օրինի իմանալու նորա կարծիքը, թէ չը կա՞յ արդեօք որ և է օրինական արգելք յիշեալ Օհանեանցին ընդունելու հոգ. կոչման մէջ, ձեռնադրելու քահ. յիշեալ երկու գիւղերի համար: Ընծայացուն աւարտած է Ներսիսեան դպրանոցը, ապահոված և ընտրուած է երկու գիւղերից, որոնք բաղկանում են մօտ 100 տնից:

— Մարտի 5. Թոյլ տալ Երևանի թեմ. ատ.-ին ընդունելու Աղէքսանդրապոլի գաւառի Գեօղալդարայ գիւղի բնակիչ Սարիբէկ Կարապետեանցին հոգ. կոչման մէջ և ձեռնադրելու քահանայ նոյն գիւղի համար: Ընծայացուն քննուած է թեմ. ատեանում և համարուած է բաւարար, ապահոված և ընտրուած է գիւղից, որը բաղկացած է 70 տնից:

— Մարտի 7. Լուծել Շարուր—Դարալագեազի գաւառի Վարմազար գիւղի բնակիչ Կարապետ Մովսիսեանցի և Շողակաթ Յովհաննիսեանցի պսակը և թոյլ տալ միայն առաջնին ամուսնանալ ուրիշի հետ, օրինաւոր քննութեամբ ապացուցուած լինելով վերջինի պոռնկութիւնը:

— Մարտի 7. Պատուիրել Տփխիսի թեմ. ատեանին հրատարակել տեղական լրագրներում ածրդախօսութիւն Տփխիսում գտնուած Մ. Աթոռի բոլոր կալուածները վարձով տալու համար՝ Սինոդից ուղարկուած ծրագրի և պայմանի համաձայն, և սակարկութեան թերթը ուղարկել Սինոդ:

— Մարտի 12. Պատուիրել Տփխիսի թեմ. ատեանին հրատարակել տեղական լրագրներում Մայր Աթոռի սեփական գիւղերի երկրային բերքերից վանքին հասանելիք բահրա կոչուած մասը՝ սակարգութեամբ տալու համար նշանակած օրերը: Այլ և պատուիրել Երևանի թեմ. ատեանին հրատարակել նոյնը ոստիկանական կառավարութեան և գործակալների ձեռքով Երևանի ամբողջ թեմում, որպէս զի ցանկացողները ներկայ լինին նշանակուած օրերին Սինոդում՝ օրինասահման գրաւականներով:

— Մարտի 12. Թոյլ տալ Երևանի թեմ. ատեանին ընդունել Սուրմալուայ գաւառի Խոշխաբար գիւղի բնակիչ Պարոյր Տ. Բարսեղեանցին հոգ. կոչման մէջ՝ կարգելու սպասաւոր նոյն գիւղի եկեղեցում։ Ընծայացուն աւարտած է Երևանի թեմ. դպրանոցը։

— Մարտի 17. Նախիջևան գաւառի Նորաշէն գիւղի բնակիչ և Վաղարշապատի վերաբնակիչ մահմեդական Ահմէդ Աբաս-օղլու խնդրագիրը, անցագիրը և Վաղարշապատի հասարակութիւնից տրուած վկայականը առաջարկել Կովկասի քաղաք. մասի Տ. Կառավարչապետին և խնդրել թոյլտուութիւն մկրտելու Հայաստանեայց եկեղեցու ծիսով։

— Մարտի 19. Վլադիկաւկաղ քաղաքի վերաբնակչուհի Սիմֆերոպոլցի հրէուհի Մարիամ Շաէյնգարտի խնդրագիրը, անցագիրը և վկայականները ուղարկել Ներքին գործոց Տ. Նախարարին և խնդրել թոյլտուութիւն մկրտելու Հայաստանեայց եկեղեցու ծիսով։

— Մարտի 19. Թոյլ տալ Երևանի թեմ. ատեանին ընդունել Օշականցի Սիմէոն Աբրահամեանցին հոգ. կոչման մէջ և ձեռնադրելով սարկաւագ կարգել սպասաւոր Երևանի ս. Սարգիս եկեղեցում։ Ընծայացուն աւարտած է Երևանի թեմական դպրանոցը, ապահոված և ընտրուած է յիշեալ եկեղեցու ծխականներից։

— Մարտի 19. Թոյլ տալ Ղարաբաղի թեմ. ատեանին ընդունել Ջիւանշիրի գաւառի Մաղաւուզ գիւղի բնակիչ Սարգիս Տ. Գրիգորեանցին հոգ. կոչման մէջ՝ ձեռնադրելու քահանայ նոյն գիւղի համար, իր զառամեալ հօր տեղը։ Ընծայացուն աւարտել է Շուշուայ քաղաք. դպրոցը, ապահոված և ընտրուած է յիշեալ գիւղից, որ բաղկացած է 57 տնից։

— Մարտի 21. Մերժել Բեսսարաբիայի Գեր. Առաջնորդի միջնորդութիւնը, Մ. Աթոռի կալուածների արդիւնքից տարեկան 300 բուբլի նպաստ տալու համար Քիշնևի եկ. ծխ. դպրոցին։